



հայկական պողպատաձուլական ձեռնարկություն „ԱՍԿԵ գրուպ” ԲԲԸ
армянское сталелитейное предприятие „АСКЕ груп” ОАО
armenian steel casting enterprise „ASCE group” OJSC

64104

15 Հունիս 2021թ.

Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ

Ղեկավարվելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի 127 հոդվածի պահանջներով, կից ներկայացվում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ Ընկերության, որպես հաշվետու թողարկողի, էական փաստերը և տեղեկությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վկայակոչված էական փաստերը և տեղեկությունները հրապարակվել են ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ www.asce.am:

Առդիր՝ 3 թերթ:

Տնօրեն՝



Խ. Անտոնյան

N 8-58 « 08 » 06 2021թ.

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Գործադիր տնօրենի ժ/պ՝ Իրինա Տեր-Աբրամյանին

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10,

<<Պիացա Գրանդե>> բիզնես կենտրոն, 1-ին հարկ, 118 սրահ

Պատճենը՝

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ

Տնօրեն՝ Խ. Անտոնյանին

Հասցե՝ 2501, ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2

Հարգելի տիկին Աբրամյան,

Կից Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ Գլխավոր տնօրենի 2021 թվականի հունիսի 08-ի թիվ ՏՊ-008-06/21 և ՏՊ-009-06/21 որոշումները՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 1,500,000 հատ (ASGRB1) և 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 7% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 150,000 հատ (ASGRB2) անվանական արժեկտրոնային պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման հարթակում տեղաբաշխման թույլատրելու մասին:

Հարգանքով,

Ցուցակման բաժնի ղեկավար՝



Լուսինե Մարգարյան

Կատարող՝ Անի Ենգիբարյան
Հեռ.՝ 060-69-55-55 (լր.-191)

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2021 թվականի N ՏՊ-008-06/21

ք. Երևան

**«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության
կողմից թողարկած անվանական արժեկտրոնային պարտատոմսերը
տեղաբաշխման թույլատրելու մասին**

Հիմք ընդունելով «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) 2021 թվականի հունիսի 08-ի դիմումը «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Թողարկող) 10,000 դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 1,500,000 հատ պարտատոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման բաժնի ղեկավարի կողմից 2021 թվականի հունիսի 08-ին ներկայացված եզրակացությունը:

Ղեկավարվելով Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության 10,000 դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 1,500,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMASGRB21ER9 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով ASGRB1 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. հունիսի 11-ին փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկությունները հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն

Հ Ա Ց Կ Ե Գ Ա Լ Յ Ա Ն

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2021 թվականի N ՏՊ-009-06/21

ք. Երևան

**«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության
կողմից թողարկած անվանական արժեկտրոնային պարտատոմսերը
տեղաբաշխման թույլատրելու մասին**


Հիմք ընդունելով «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) 2021 թվականի հունիսի 08-ի դիմումը «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Թողարկող) 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 7% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 150,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) Ցուցակման բաժնի ղեկավարի կողմից 2021 թվականի հունիսի 08-ին ներկայացված եզրակացությունը.

Ղեկավարվելով Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով, 7% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 150,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMASGRB22ER7 ծածկագիրը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում՝ շնորհելով ASGRB2 հապավումը:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. հունիսի 11-ին փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկությունները հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ



ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ